Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-33.3-Ղ4-1 Բաժնի պետ(2024-03-22)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Աղետների և արտակարգ այլ իրավիճակների կառավարման վարչություն | Աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման կառավարման բաժին | Բաժնի պետ, (27-33.3-Ղ4-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին**:**

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ Բաժնի գլխավոր մասնագետը:

1.5 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Նալբանդյան փ. 130:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. ապահովում է աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման ոլորտում Նախարարության քաղաքականության իրականացման համակարգումը.
2. ապահովում է Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, գրասենյակի, Նախարարությանը ենթակա պետական մարմինների և Նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ մասնագիտական ստորաբաժանումներ) հետ համատեղ աղետների ռիսկի և արտակարգ այլ իրավիճակների կառավարմանն ուղղված ռազմավարական բնույթի փաստաթղթերի, նպատակային ծրագրերի իրականացումը.
3. ապահովում է աղետների ռիսկի նվազեցմանն և արձագանքմանն առնչվող տեղեկատվության հավաքագրումը, ամփոփումը և վերլուծումը, անհրաժեշտության դեպքում՝ ոլորտային ուսումնասիրությունների կատարումը.
4. ապահովում է աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման ոլորտի զարգացման հիմնախնդիրներով առաջարկությունների ներկայացման գործընթացը.
5. ապահովում է աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման ոլորտին առնչվող միջազգային ծրագրերով նախատեսված միջոցառումների մշակման աշխատանքների համակարգումը.
6. ապահովում է աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման գործընթացների իրականացմանն ուղղված կարգերի, պլանների, ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների և այլ փաստաթղթերի նախագծերի մշակումը.
7. ապահովում է աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման ոլորտի միջազգային ծրագրերով նախատեսված աշխատանքներին, համատեղ իրականացվող ծրագրերին, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, քննարկումներին, սեմինարներին և այլ միջոցառումներին մասնակցությունը:

Իրավունքները.

- ձևավորել և վարել աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման ոլորտի զարգացման հիմնախնդիրներով քննարկումներ, հանդիպումներ, խորհրդակցություններ, ինչպես նաև ներկայացնել մասնագիտական առաջարկություններ.
- պահանջել և ստանալ տեղեկատվություն, փաստաթղթեր օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ արտակարգ իրավիճակների ոլորտին առնչվող միջազգային ծրագրերով հանդիպումներին, խորհրդակցություններին, սեմինարներին, քննարկումներին մասնակցելու նպատակով.
- մասնագիտական ստորաբաժանումներից պահանջել և ստանալ տեղեկատվություն արտակարգ իրավիճակների ոլորտի զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ,
- հարցում կատարել մասնագիտական ստորաբաժանումներին աղետների ռիսկի կառավարման բնագավառի օրենսդրության կատարելագործմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ.
- պահանջել և ստանալ մասնագիտական ստորաբաժանումներից լրացուցիչ պարզաբանումներ, հիմնավորումներ և տեղեկատվություն աղետների ռիսկի կառավարմանն ուղղված ռազմավարական բնույթի նպատակային ծրագրերի, արտակարգ իրավիճակների ոլորտի միջազգային ծրագրերի իրականացման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ոլորտի զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ.
- պահանջել և ստանալ լրացուցիչ տեղեկություն մասնագիտական ստորաբաժանումներից աղետների ռիսկի կառավարման գործընթացների իրականացմանն ուղղված ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների և այլ փաստաթղթերի մշակման համար.
- նախաձեռնել աղետների ռիսկի կառավարման գործընթացների իրականացմանն ուղղված ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների և այլ փաստաթղթերի մշակման նպատակով, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ոլորտի զարգացման հիմնախնդիրներով մասնագիտական ստորաբաժանումներից ստացված առաջարկությունների վերաբերյալ մասնագիտական ստորաբաժանումների հետ համատեղ հանդիպումներ և աշխատանքային քննարկումներ.
- ներկայանալ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ արտակարգ իրավիճակների ոլորտին առնչվող միջազգային ծրագրերով հանդիպումներին, խորհրդակցություններին, սեմինարներին, քննարկումներին, ներկայացնել մասնագիտական առաջարկություններ ոլորտի խնդիրների լուծման վերաբերյալ:

Պարտականությունները.

- ստուգել աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման գործընթացների իրականացմանն ուղղված կարգերի, պլանների, ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների և այլ փաստաթղթերի նախագծերի մշակման նպատակով ստացված տեղեկատվությունը.
- վերլուծել մասնագիտական ստորաբաժանումներից աղետների ռիսկի կառավարմանն առնչվող տեղեկատվության ստացման գործընթացը, ամփոփել արդյունքները.
- վերլուծել աղետների ռիսկի կառավարման բնագավառի զարգացման ռազմավարական բնույթի յուրաքանչյուր փաստաթղթերով նախատեսված միջոցառումների, ինչպես նաև առանձին հանձնարարականների կատարման որակը, ամբողջականությունն ու ժամկետների պահպանումը, ուսումնասիրել հանձնարարականների կատարողականի վերաբերյալ հաշվետվությունները և ներկայացնել Վարչության պետին.
- ստուգել արտակարգ իրավիճակների ոլորտի միջազգային ծրագրերով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ ամփոփված տեղեկատվությունը, կազմված վերլուծությունները, հաշվետվությունները.
- վերլուծել աղետների ռիսկի կառավարման բնագավառը կանոնակարգող օրենսդրության կատարելագործման ուղղությամբ մասնագիտական ստորաբաժանումներից ստացված առաջարկությունները, ստուգել ուսումնասիրման և քննարկման արդյունքում մշակված ամփոփ տեղեկատվությունը.
- վերլուծել արտակարգ իրավիճակների ոլորտին առնչվող միջազգային ծրագրերով նախատեսված միջոցառումների վերաբերյալ մասնագիտական ստորաբաժանումներից ստացված և ամփոփված առաջարկությունները, արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել Վարչության պետին.
- հսկել արտակարգ իրավիճակների ոլորտի համատեղ իրականացվող միջազգային ծրագրերի իրականացման ընթացքը, ստուգել արդյունքների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները.
- համագործակցել մասնագիտական ստորաբաժանումների հետ աղետների ռիսկի կառավարմանն ուղղված ռազմավարական բնույթի նպատակային ծրագրերի համատեղ մշակման, դրանց համակարգման և իրականացման նպատակով:

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն**:**

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Բարեվարքություն
  - Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
  - Որոշումների կայացում
  - Ծրագրերի կառավարում
  - Աշխատակազմի կառավարում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Կառավարում արտակարգ իրավիճակներում
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Ժամանակի կառավարում
  - Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ իր իրավասությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: